HAYP
Armenian Pop Up Gallery

Info.hayp@gmail.com
+374.099.741.626

<Մտքի շրջանակ՝ համատեքստ և հեռանկար>

Հայփի պրեմիերան, հավաքական ցուցահանդես և մշակութային միջոցառումների շաբաթ

Դեկտեմբերի 15-22,

Կոչ արվեստագետներին՝

Հայփը փնտրում է ժամանակակից արվեստագետների Երևանում իր առաջիկա <Մտքի շրջանակ՝ համատեքստ և հեռանկար> ցուցահանդեսի համար: Հրավիրում ենք արվեստագետներին բացահայտելու, թե ինչպես են համատեքստն ու հեռանկարը ձևավորում մեր տեսանկյունը: Մեր մակույթը, դաստիարակությունը և անձնական փորձը ազդում է մեր աշխարհայացքի վրա, մեզնից յուրաքանչյուրն ունի յուրահատուկ հեռանկար: Ո՞րն է Ձեր անձնական շրջանակը, ինչպե՞ս կարող եք մեզ տանել Ձեր տարածք: Մասնակից արվեստագետները կուսումնասիրեն և՛ ֆիզիկական տարածության և՛ հայեցակարգային վերացականության միջոցով տեսնելու ուղիները: Այս ցուցահանդեսի նպատակն է խրախուսել երկխոսություն, ըմբռնում և լայնախոհություն արվեստագետների ստեղծագործ ապակու միջոցով:

Վերջնաժամկետները՝

Արվեստագետի դիմում՝ մինչև դեկտեմբերի 1, 2014
Միջոցառման դիմում՝ մինչև դեկտեմբերի 7, 2014

Ի՞նչ է Հայփը

Հայփը շարժվող ցուցահանդես է, որը կկազմակերպի ժամանակավոր ցուցադրություններ Երևանի անսպասելի վայրերում, օրինակ՝ ազատ տաղավարներում, վարձով շենքերում կամ լքված գործարաններում: Քաղաքը մեր պատկերասրահն է: Մեր շարժվող 10 օրյա ցուցահանդեսները ակտիվ հասարակությանը կզբաղեցնեն երաժշտության, ներկայացումների և զրույցների միջոցով՝ աջակցելով տեղացի ժամանակակից արվեստագետներին: Շուտով կբացվի <Հայփ բլոգ> առաջիկա ցուցահանդեսների ու միջոցառումների մասին, ինչպես նաև Հայաստանում ժամանակակից արվեստի ու նորարարության մասին:

Գրանցման ուղեցույց

Արվեստագետի գրանցում՝

- Ուղարկե՛ք բոլոր դիմումները info.hayp@gmail.com էլեկտրոնային հասցեով:
- Եթե դիմում եք որպես արվեստագետ, ապա խնդրում ենք Ձեր էլեկտրոնային նամակը վերնագրե՛ք <(Ձեր անունը) արվեստագետի դիմում>
- Ուղարկե՛ք Ձեր կարճ (50 բառից ոչ ավելի) կենսագրությունը (արվեստագետի կենսագրություն):
- Ուղարկե՛ք Ձեր վեբ կայքի կամ ֆեյսբուքյան էջի հասցեն Ձեր աշխատանքների նկարներով (եթե իհարկե ունեք): Կամ կարող եք ուղարկել նկարները Դրոփբոքսի կամ www.wetransfer.com միջոցով: **Խնդրում ենք, մի՛ ուղարկեք նկարներ մեր էլեկտրոնային հասցեին:**

Info.hayp@gmail.com
+374.099.741.626

- Ուղարկե՛ք Ձեր արվեստի գործի զաղափարի կարճ նկարագրությունը, կամ այն արվեստի գործի նկարագրությունը նկարներով (տե՛ս վերևում նշված ուղեցույցները), որը համապատասխանում է այս թեմային:
- Արվեստագետը կարող է ամենաշատը 4 գործ ներկայացնել:

Միջոցառման գրանցում՝

- Ուղարկե՛ք բոլոր դիմումները info.hayp@gmail.com էլեկտրոնային հասցեով:
- Եթե դիմում եք միջոցառմանը գրանցվելու համար, ապա խնդրում ենք վերնագրե՛ք Ձեր նամակը <(Ձեր անունը) միջոցառման գրանցում>:
- Միջոցառումները տեղի կունենան երեկոյան, շարժական ցուցահանդեսի շաբաթվա ընթացքում: Մենք խրախուսում ենք ցանկացած ժամանակակից արվեստի և նորարարության միջոցառում Հայաստանում: Օրինակ՝ արվեստագետների ելույթներ, ֆիլմերի ցուցադրություններ, երաժշտական ներկայացումներ, պար և արվեստի ներկայացումներ:

Վերջնաժամկետները՝

Արվեստագետի դիմում՝ մինչև դեկտեմբերի 1, 2014
Միջոցառման դիմում՝ մինչև դեկտեմբերի 7, 2014